ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 փետրվարի 2014թ. թիվ 29-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 31.01.2014թ. թիվ 24-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2014թ. մարտի 3-5-ը, ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջում, Վանաձորի թթ. 1, 2, Ալավերդու թիվ 2 հիմնական և Գյուլագարակի միջնակարգ դպրոցներում, Վանաձորի թիվ 5 և Գուգարքի ավագ դպրոցներում անցկացնել օբյեկտային վարժանքներ ««Օդային տագնապ» ազդանշանի դեպքում պատսպարման իրականացումը» թեմայով, իսկ Վանաձորի «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում, Վանաձորի պետական բժշկական քոլեջում, Վանաձորի թթ. 7, 9, 15, Սպիտակի թիվ 3, Տաշիրի թիվ 2 հիմնական դպրոցներում և Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցում անցկացնել դասախոսություններ «Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությունը» և «Հրդեհային անվտանգությունը ուսումնական հաստատություններում» թեմաներով:

2. Վարժանքների և դասախոսությունների անցկացման նպատակներն են.

1) ստուգել մարզի բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ղեկավար կազմի, աշխատողների և ուսուցանվողների պատրաստականությունը «Օդային տագնապ» ազդանշանի և հրդեհի դեպքում.

2) ուսուցանել նրանց «Օդային տագնապ» ազդանշանի և հրդեհի դեպքում գործողություններին, պահելաձևին, վարքի կանոններին և հմտություններին:

3. Վարժանքի կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով վարժանքի ղեկավարներ նշանակել վերը նշված բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ղեկավարներին:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ղեկավարներին.

Մինչև ս/թ փետրվարի 25-ը՝

1) ճշգրտել քաղաքացիական պաշտպանության պլանները և գործողությունների պլան-ժամանակացույցերը.

2) ճշգրտել տարահանման սխեմաները.

3) օբյեկտային վարժանքի նախապատրաստման փուլում մասնակիցների հետ, ըստ վարժանքի թեմայի, անցկացնել ուսումնական պարապմունքներ:

5. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

1) աջակցել Լոռու մարզային փրկարարական վարչությանը վարժանքների մասնակից մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներին մեթոդական օգնություն ցուցաբերելու, վարժանքների և դասախոսությունների նախապատրաստման ու անցկացման գործում.

2) մինչև ս/թ փետրվարի 14-ը սույն որոշման մասին իրազեկել վարժանքների և դասախոսությունների մասնակիցներին:

6. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

Օբյեկտային վարժանքների նախապատրաստման փուլում մասնակիցների հետ, ըստ վարժանքի թեմայի, անցկացնել ուսումնական պարապմունքներ՝ ներգրավելով տվյալ տարածաշրջանները սպասարկող հրշեջ փրկարարական ջոկատների հրամանատարներին:

7. Վարժանքների և դասախոսությունների անցկացման ընթացքի հսկողությունն իրականացնել Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. փետրվարի 4
ք.Վանաձոր